Չմեռալին հանգստի կացութիւն մեջ գտնվող մեղուներին ամեն կերպ պետք է պաշտպանել վորեւ անհանգստութիւնից. ամեն մի ցնցում, ամեն մի թխկոց նրանց հանգստի կացութիւնից հանում է, գրգռում. մեղուններն անմիջապես գործունչա գրութիւն են անցնում, կծիկի ջերմաստիճանը արագորեն բարձրանում է մինչև +33, +35°C: Ամեն մի ալպլիսի դեպքում մեղուններն սկսում են մեզը ուտել: Այսպիսով նրանք մի կողմից վատնում են պաշարը, իսկ մյուս կողմից՝ նրանց փորը լցվում է կղկղանքով, վորի հետեանքները մասին արդեն խոսել ենք: Ամեն անգամ լիակատար հանգստի կացութիւնից դուրս գալով և գործունչա գրութիւն անցնելով, մեղունները վատնում են իրենց կենսական ուժերը, վոր նրանց համար աչնքան անհրաժեշտ են:

Գրգռվելիս մեղունների բնական դասավորութիւնը կծիկում խանդարվում է. նրանք շաղ են դալիս փեթակում և նրանց համար դժվար է լինում կրկին վերականգնել իրենց նորմալ դասավորութիւնը. շատ մեղուններ կծիկից բաժանվում են, ցրտահար լինում և սատկոտում:

Յեթե մեղվապահը ժամանակին իր մեղուններին ինչպես հարկն է, չէ հոգացել և ձմեռվա ընթացքում փեթակները շարժում է, բաց ու խուփ անում նրանց կարիքներին բավարարելու համար, գրանով նա խիստ փաստում է մեղուններին:

Մկնեքը ձմեռող մեղունների ամենաշար թշնամիներն են. նրանք ուտում են մեղրը, մեղուններին, ա-

դում են թափում չեչերը: Մեղունները ձմեռը մկնեքից պաշտպանվել չեն կարողանում, վորովհետև պողածթմրած են լինում. վորոնք կծիկից բաժանվում են, իսկույն սառչում են, վայր թափվում, ուստի մուկն անպատիժ շարունակում է իր ավերածութիւնը (չերբեմն մեղունները մկնեքին աչնուամենաչնիվ սպանում են): Յերբեմն մկնեքը փեթակում բուն են դնում և ճտեր հանում: Բայց մկնեքի պատճառած փասք միայն այդ չէ. նրանք իրենց աղմուկով և չխկչխկոցով անհանգստացնում են մեղուններին և ամբողջ ձմեռվա ընթացքում նրանց պահում են լարված և գրգռված գրութիւն մեջ. իսկ այդպիսի գրութիւն հետեանքները մենք լավ գիտենք:

Չմեռվա րերացումս վորդ խնամելը. — Փեթակում սովորաբար ձմեռելու վերջին ամսում տեղի չե ունենում մի չերեույթ, վորը շատ մեծ ազդեցութիւն է գործում ձմեռող ընտանիքի վրա. դա աչն է. վոր մեղունները գրգռում են մորը ձու ածելու և սկսում են վորդ խնամել. դրա հետ միասին բարձրանում է ջերմաստիճանը կծիկի ներսում, մեղունները գործունչա գրութիւն են անցնում և մեղրի սպտումը խոշոր չափեր է ընդունում. աչս չերեույթի նշանակութիւն և ազդեցութիւն մասին մենք պետք է պարզ դադափար ունենանք և վորոշենք մեր վերաբերմունքը դեպի աչն:

Առաջին հայացքից թվում է, վոր սա մի նորմալ և նպատակահարմար չերեույթ է, վորովհետև վորքան մեղունները շուտ են սկսում վորդ խնամել, աչնքան շուտ են դուրս գալիս չերխտասարդ մեղուններ փոխարինելու աշնան մեծահասակ՝ զառամած մեղուններին. վորքան շուտ է սկսվում վորդի խնամատարութիւնը,

այնքան ավելի ապահովված և ընտանիքի առավելագույն զարգացումը մինչև գլխավոր մեղրարերք. վերջապես մեր այս կամ այն շահերին զուգադիպում և այդ չերևույթը թե վոչ, գուցե նա մի նորմալ և անխուսափելի յերևույթ և, վորին արգելել՝ կնշանակե խանդարել ընտանիքի կյանքի բնական կարգը. գուցե, չեթե ուզենք ել, չենք կտրող վերացնել այդ չերևույթը, ուրեմն մենք սրտք և միայն ընդունենք այն և հաշովենք նրա հետ:

Ամենից առաջ մեզ պիտի հետաքրքրե մի հարց. գլխավոր մեղրարերքի սկզբին իրենց զարգացման գազաթնակետին հասած ընտանիքներ ունենալու համար անհրաժեշտ և արդյոք, վոր մեղուները դեռ ձմեռոցում սկսեն վորդ խնամել:

Մեր յերկրի լեռնային մասում գլխավոր բերքն սկսվում և ամենաշուտը հունիս 18—20-ին (Սուխոյ ֆոնտան). ավելի հաճախ նա սկսվում և հուլիս 15—18-ին (Թալչարուխ՝ Յերեանի գավառ, Նոր-Բայազետի գավառ և այլն): Մեղուները սովորաբար դուրս են դրվում մոտավորապես ապրիլի 5—15-ը. ուրեմն՝ դուրս դնելուց մինչև բերքի սկիզբը տևում և առնվազը 70 օր, իսկ հաճախ 90 օր և ավելի: Այդ ժամանակա-միջոցում լիակատար հնարավորություն կա ընտանիքը իր զարգացման գազաթնակետին հասցնելու, միայն թե մեղուները ձմեռվա ընթացքում սպառած չլինեն իրենց սրտարը և կենսական ուժերը, միայն թե գարնան ընթացքում նրանք չտուժեն ցրտից և սովից: Ուրեմն մեր պատասխանը վերևում դրված հարցին պիտի բացասական լինի:

Բայց չեթե փեթակները դուրս դնելուց մինչև

բերքի սկսվելու ժամանակը ավելի կարճ ևլ լինեք և ցանկալի լինեք ընտանիքներին դբդել վաղ զարգացման, մենք այդ նպատակին չեյինք հասնի մեղուներին ձմեռոցում վորդ խնամել տալով: Վորքան ևլ վոր մեղուները ձմեռոցում վաղ սկսեն վորդ խնամել, մինչև դուրս դնելը նրանք հազիվ կարող են մի չնչին քաջանակուլթյամբ մեղու հանել. այդ չնչին քանակուլթյամբ վորդը խնամելու համար նրանք վերջին մեկ ամսվա ընթացքում դորձ կդնեն մեծ քանակուլթյամբ մեղր, գործունյա դրուլթյան կանցնեն և կվատեն իրենց կենսական ուժերը, ուստի և մեր վնասն օգուտից շատ կլինի:

Մեղուները սովորաբար վորդի խնամատաբուլթյունը չեն կարողանում հաջող կերպով տանել փակված վիճակում: Դրա համար ել, չեթե մեղուները ձմեռոցում վաղ սկսում են վորդ խնամել, դուրս դնելիս մենք տեսնում ենք, վոր վորդն ու ձուռն ցաք ու ցրելվ են լինում և խառնիխուրը: Այդ ապացուցում և, վոր խնամված վորդերից շատերը փչացել են, չերեի իհարկե անհրաժեշտ նյութերի բացակայուլթյան պատճառով (Չուր, ծաղկափոշի և այլն):

Այուս կողմից իր մեղուների կյանքին ուշադիր կերպով հետևած ամեն մի մեղվապահ մեզ հետ միասին կհաստատի, վոր-մեղուները վաղ սկսում են վորդ ու ձուռ խնամել, չեթե ձմեռոցը շոգ և և նրանք վերջին ամիսն անհանգիստ և գբգոված վիճակում են յեղել: Նույնը տեղի յե ունենում նույնպես այն դեպքում, յերբ մեղուները գբգովել են ցրտից: Ընդհակառակը, չեթե մեղուները մինչև դուրս դնելու ժամը ընկղմված են չեղել լիակատար հանգստի մեջ և չեն

տուժել վոչ ցրտից, վոչ շոգից և վոչ աչլ անհանգստացնող հանգամանքներից, դուրս դնելուց հետո, չնայած լավ յեղանակին, դեռ մեղուն փեթակից դուրս չի թռչում, աչնպես վոք կասկածում ես թե նա հանդել է. փեթակներից շատերում դեռ մալքը չէ սկսել ձու դնել: Դրանից մենք կարող ենք յեզրակացնել, վոք աննպաստ պայմանները դրգում են մեղվին վաղ սկսել վոքդի ու ձուի խնամատարութիւնը և ընդհակառակը նպաստավոր պայմանները, ստեղծելով մեղունների համար լիակատար հանգստի կացութիւն, հետ են ձգում վոքդ խնամելը:

Մեր այդ տեսակետը հաստատում է մեղվաբուծութեան խոշորագույն հեղինակութիւններից մեկը՝ Ֆիլլիպը *). Նրա կարծիքը մեզ համար արժանաւոր է արժեքավոր պիտի լինի, վորովհետեւ նա խոսում է ամերիկացի անմեղվաբուծութեան փորձի վրա հիմնովով, վորտեղ մեղունների ձմեռելը դրված է լավագույն հիմքերի վրա:

«Մեղունները յերբեմն **) ձմեռւիւ ընթացքում սկսում են վոքդ խնամել, վոք սովորաբար հետեանք է լինում զանազան արտաքին աննորմալ պայմանների: Վորդի խնամատարութիւնը պայմանավորում է բարձր ջերմաստիճան և դրան համապատասխան չափից դուրս գործունէութիւն, ի վնաս բնօրինի: Պետք է վորքան կարելի չէ չերկար ժամանակ խուսափել վոքդ ու ձուի առաջանալուց, քանի վոք մեղունները հնարավորութիւն չունեն արգաստորեն թռիչք գործելու:

«Դրա հետ միասին չպետք է մոռանալ, վոք հաճախ ձվաբեկութիւնն սկսվում է դրսում ձմեռող փեթակներում հենց ցրտի ժամանակ: Մեղվի ընտանիքի ջերմաստիճանի մասին մեր վերևում ասածները հաստատում են այն տեսութիւնը, վոք դրսի չափազանց ցուրտը առաջացնում է կծիկի ջերմաստիճանի բարձրացում մինչև այն աստիճան, վոք հնարավոր է դառնում ձվաբեկութիւնը և վոք աչգ մի պատասխան և արտաքին ցրտին»:

Վերն ասածներից մեզ համար պարզ պիտի լինի վոք՝ ա) թե մեղունների և թե մեր շահերի տեսակետից ձեռնուտ չե, վոք մեղունները ձմեռելու վիճակում չսկսեն վոքդ խնամել, բ) վոք ձվաբեկութիւնը և վոքդ խնամելը ձմեռելու ընթացքում արգանում են աննպաստ պայմանների շնորհիվ և գ) վոք դրանից խուսափելու համար պետք է մեղունների համար ստեղծել ձմեռելու նպաստավոր պայմաններ, այնպես վոք նրանք մինչև դուրս դնելու ժամը ընկղմված լինեն կիսաընդարմացած (լիակատար հանգստի) կացութեան մեջ:

Յերբ մեղունների ձմեռելու տեղում է 5 ամիս և ավելի, հավանորեն ինչպիսի պայմանները մեջ էլ դնելու լինենք նրանց, վերջին 20—25 օրվա ընթացքում նրանք մեծ մասամբ կսկսեն վոքդ խնամել բաց յեթե նրանք նպաստավոր պայմանների մեջ են դտնվում, վոքդ ու ձուի քանակը շատ սահմանափակ կլինի և նրա զարգացումը նորմալ կընթանա և միևնույն ժամանակ ընտանիքից շատ ուժ և ծախս չի խլի:

*) Э. Филлипс, — «Пчеловодство», 1930 г. стр. 201.

**) Ընդգծումները մերն են:

Գ. ՄԵՂՈՒՆԵՐԻ ՉՄԵՌԵԼՈՒ ՅԵՐԿՈՒ ՅԵՂԱՆԱԿ

Մեղուները ձմեռելու համար գործադրվում է յերկու չեղանակ. կամ մեղուներին թողնում են ձմեռելու դրսում՝ հենց իրենց տեղերում, կամ ցրտերն ընկնելիս՝ նրանց տեղափոխում են համապատասխան շենքի մեջ մինչև գարուն: Մինչև այժմ դեռ ևս այս խնդրի շուրջը միաձայնություն չի ստեղծված. վոմանք մի յեղանակի կողմնակից են, ուրիշները՝ մյուս: Մի բանի մասին հակաձայնություններ չկան. վոր դրսում ձմեռող ընտանիքն անհամեմատ ավելի չի ուտում. քստ Բուտի՝ համարյա յերկու անգամ:

Կարծում ենք, վոր այս խնդիրը լուծելու համար պետք է հաշվի առնել յերկու հանգամանք. ա) տեղի կլիմայական պայմանները և բ) այն հարմարությունները, վոր իր արամադրություն տակ ունի մեղվապահը:

Մեղուների ձմեռային խնամքի ամբողջ իմաստը մենք կարող ենք մեկ նախադասությունով ձևակերպել. Չմեռելու ամբողջ ընթացքում (հանգստի օրջան) մեղուներին պետք է պահել լիակատար հանգստի կացության մեջ (կիսաընդարմացած դրություն): Մենք արդեն գիտենք, թե ինչ հանգամանքներ են խանգարում մեղվի հանգիստը. ուրեմն և կարող ենք մեղուներին ապահովել բոլոր աննպաստ հանգամանքներից. դրանցից ամենագլխավորը Չերմաստիճանի խնդիրն է: Չի կարելի վիճել, վոր Չերմաստիճանի սուր տատանումներից մեղվին լիովին ապահովել է ամբողջ հանգստի շրջանում նրա համար միապաղպղ և նպաստավոր Չերմաստիճան ստեղծելը հնարավոր է միայն

մեղվի շենքի մեջ ձմեռելու դեպքում: Ասողջ դատուցությունը մեզ ասում է, վոր ինչպիսի պայմանների մեջ էլ դենք մեղվին, դրսում ձմեռելու դեպքում մենք նրան Չերմաստիճանի տատանումներից լիովին ապահովել չենք կարող և այդ տատանումները ավելի կամ պակաս չափով կանգրագանան մեղուների վրա:

Ի՞նչ դեպքերում մեղուներին անհրաժեշտ է բողնել դուրսը ձմեռելու.— Միայն այն դեպքում, յերբ ձմեռը այնքան մեղմ է, վոր մեղուների վրա ցուրտը ազդեցություն չի կարող ունենալ. մինչդեռ ներսում կտուժի տաքից, գերազասելի յե մեղուներին թողնել դրսում: Կան տեղեր, վորտեղ համարյա թե ձմեռ չի անում, միայն յերբեմն ձյուն է գալիս և շուտով հալվում. մեղուները հնարավորություն ունեն յերբեմն թռիչք գործելու, մաքրվելու իրենց փորում հավաքված կղկղանքից. նրանք դրսի թարմ ոդում իրենց լավ են զգում. յեթե մենք այդպիսի պայմաններում մեղուներին շենքի մեջ դենք, Չերմաստիճանը չենք կարող հարմարեցնել մեղվի պահանջներին ձմեռուցում ողջ տաք կլիմայի. իսկ թե ինչ ազդեցություն կունենա այդ մեղուների վրա, մենք արդեն գիտենք: Մուրաթյուն կլինի կարծել, թե մեղուները ձմեռը կամ վաղ գարնանը կարող են վորեք ողտակար աշխատանք կատարել:

Ինչ դեպքերում մեղուներին կարելի յե բողնել դրսում ձմեռելու.— Ավելի ցուրտ տեղերում էլ մեղուներին կարելի յե թողնել դուրսը ահա թե ինչ է ասում այդ մասին Ե. Բերտրանը:

«Մեր յերկրում (Շվեյցարիայում) մինչև իսկ ամենաբարձր տափաստաններում, վորտեղ գրտերը հաս-

նում են 20-ից մինչև 25 աստիճանի ըստ Յելսիուսի (16-ից մինչև 20 ըստ Ռեոմյուսի), մեղուների (զուբսը) ձմեռելը վոչ մի դժվարություն չի ներկայացնում:

«Ձյունով ամբողջովին ծածկված փետակները կարող են ամիսներով այդ դրության մեջ մնալ և մեղուն դրանից բոլորովին չի վնասվի»:

Մակայն այս սեսակետը մենք կարող ենք հնացած համարել. նա հիմնված չէ գիտական տվյալների վրա: Բերտրանից հետո ձմեռելու խնդրի գիտական ուսումնասիրություն վրա շատ մեծ աշխատանք է կատարված: Ամերիկացի ժամանակակից լավագույն մասնագետներից մեկը Ե. Ֆիլլիպսը այդ մասին, ասում է՝ «Յեթն տվյալ տեղում հունվար ամսում միջին ջերմաստիճանը տատանվում է -4°C — $9,5^{\circ}\text{C}$ սահմանում, մեղվապահը կարող է հնարավոր համարել մեղուների գրսում ձմեռելը ձմեռոցում. իսկ յեթն այդ ջերմաստիճանը— $9,5^{\circ}\text{C}$ -ից ցած է, մեղուների ներսում ձմեռելը դառնում է համարյա պարտադիր»:

Հասկանալի չէ միանգամայն, վոր խիստ ցուրտ տեղերում մեղուների զուբսը ձմեռելը միանգամայն անթույլատրելի չէ, չնայած վոր մեղուններն այդ ցրտերին մի կերպ կարող են դիմանալ:

Հատկապես մեղնում անհրաժեշտ է բացի ջերմաստիճանից, սուսանձնապես ուշադրություն դարձնել տեխնիկական հարմարությունների վրա: Կարծում ենք, վոր— 4°C — $9,5^{\circ}\text{C}$ միջին ջերմաստիճանի պայմանում Հայաստանի մեղվապահը իր մեղուները ձմեռոցում դնել չի կարող, այդ պայմանում միայն ամերիկական իդեալական ձմեռոցներում է, վոր մեղուն կարող է ձմեռել առանց նեղվելու շոքից, վատ ոդից և

լուսից: Մեղնում մեղուների համար հատուկ ձմեռոցներ չեն շինվում: Նրանք դրվում են ձմեռելու պատահական շենքերի մեջ և յեթն հունվարին միջին ջերմաստիճանը այդ է (-4°C — $9,5^{\circ}\text{C}$), ուրեմն փետրվարին նա ավելի բարձր կլինի և մեղուները խիստ կերպով կտուժեն:

Բացի այդ, Ամերիկացի մեղվապահը իր տեղի միջին ջերմաստիճանի մասին կարող է ստույգ տեղեկություն ստանալ ողբերկութարանական կաշաններից, վորոնց թիվն աչտեղ շատ է. իսկ մեղնում նա պիտի հիմնվի միայն իր փորձի վրա. իսկ իր փորձը կարող է սխալ լինել և քիչ միևնույն տեղում տարբեր տարիներում տարբեր յեղանակներ են լինում և առնվազն 3 տարվա փորձը միայն կարող է մոտավոր գաղափար տալ տեղի ձմեռվա մասին: Պետք է նաև նկատի առնել, վոր ջերմաստիճանի չափումը և նրա միջինը հանելը մատչելի չէ մեր մեղվապահներից շատերի համար, ուստի և կարելի չէ սխալումների մեջ ընկնել և փչացնել մեղվանոցը:

Մեղնում մեղուների դրսում ձմեռելը կարող է անհրաժեշտ ճանաչվել Լոուի-Փոմբակի, Դիլիջանի և Ջանդեղուրի դավառների, ինչպես նաև լեռնային Դարբազի ցածրադիր տեղերում. իսկ Յեթնանի, Դարալագյալի, Եջմիածնի և Լենինականի դավառներում մինչև իսկ դաշտային մասերում (խաղողի և բամբակի գոտի) անհրաժեշտ է մեղուների ներսում ձմեռելը:

Այստեղ չպետք է մոռանալ մի կարևոր հանգամանք. Մեղուներին խիստ ցրտեր անգամ այնպես չեն վնասում, ինչպես անբուսային անընդհան պող ֆամիները յեվ ցուրտ խոնավուրյանը՝ մառախուղներ:

Դ. ՄԵՂՈՒՆԵՐԻ ՉՄԵՌԵԼԸ ԴԻՍՈՒՄ

Մեղվի ընտանիքը դրսում կարող և հաջողութեամբ ձմեռել միայն այն դեպքում, լեթե նա բավական հարուստ և մեղվով և լեթե լիովին ապահովված և պաշարով: Միևնույն պայմանների մեջ գտնվող թույլ ընտանիքները խիստ տուժում են ցրտից, մինչդեռ ուժեղները շատ լավ են զգում իրենց, ուստի և թույլ ընտանիքներին ավելի լավ և ներքը դնել ձմեռելու:

Փեքակների սարքերը. — Շատերը շրջանակները դնում են բնի մեջտեղում, աջից և ձախից դնում են միջնատախտակներ, վորոնց յետևի գատարկ տարածութունը լցնում են ծղոտով, իսկ վերեկից դնում են ծղոտից պատրաստած բարձ մոտ 60 սմ. հաստութեամբ:

Կասկած չկա, վոր այսպիսի տաքացումը պետք և ճանաչել անբավար:

Նախ պետք և ծղոտը փոխարինել դարմանով: Առհասարակ վորպես տաքացման նյութ արտասահմանումն ևլ գործ և անվում ծղոտ, խիզարի թեփ, չոր տերեւներ և այլն. մեր յերկաբատե և բազմակողմանի փորձերը մեզ բերեցին այն չեղբակացութեան, վոր դարմանը վորպես տաքացման նյութ գերազանցում և այդ բոլորից. ուրեմն ծղոտի փոխարեն պետք և միջնատախտակները չետեը լցնել դարմանով: Վորպեսզի նրանից կեղտոտութուն չարաջանա, մենք դատարկ տարածութեան մեջ դնում ենք մի տուպրակ, վորը լցնում ենք դարմանով. վերեկից մենք դնում ենք փայտյա շրջանակ ունեցող մի բարձ, վորի մեջ նույնպես դարման և լցրած:

Տաքացնելու այս յեղանակը մենք դործադրում ենք դարնան ընթացքում. բայց ձմեռվա համար այդ յեղանակն անգամ պետք և համարել անբավարար:

Տաքացնելու միակ բավար ձևը պետք և ճանաչել հետեյալը, վոր այժմ ամենուրեք ընդունված և Ամերիկայում. այդ այն և, վոր փեթակն ամփոփում են փայտյա պատյանի մեջ, այնպես վոր փեթակի 6 կողմից գոչանում և մոտ 6 սանտ. լայնութեան գատարկ տարածութուն (2 վերջուկից քիչ ավել) և այդ գատարկ տարածութունը լցնում են տաքացնող նյութով. մեղնում ինչպես ասացինք, ամենահարմար նյութը՝ դարմանն և: Խնայողութեան համար այժմ ընդունված և մի պատյանի մեջ ամփոփել 4 փեթակ. սակայն սա հնարավոր և միայն այն դեպքում, յեթե փեթակները գաստվորված են խմբերով, չորս-չորս:

Մեր փեթակները այս կերպ սարքելիս անհրաժեշտ և վերցնել կտուրը, բարձր. կարելի և թողնել և փեթակի վերից ծածկել դարմանով և կալարիչով:

Մյուս յեղանակները՝ փեթակը ծղոտով փաթաթելը կամ կրկնակի պատերով փեթակներ շինելը պետք և համարել անբավարար. մենք կզգուշացնելինք մանավանդ կրկնակի պատերով փեթակներ գործածելուց. նրանք ծանր են և անճոռնի, միևնույն ժամանակ լիովին չեն ապահովում մեղուներին ամեռային ցրտից:

Յերը մեղվապահը իր փեթակները սարքում և ձմեռվա համար, պետք և հույս չդնի, թե ձմեռը կարող և մեղմ անցնել. նա պետք և նկատի ունենա ամենախիստ ձմեռը, վոր կարող և լինել ավելալ տեղում և դրա համեմատ ևլ հարմարեցնի իր փեթակները:

Յեթե ձմեռը մեզմ կլինի, նրա մեղուները տաք սարքոված լինելուց չեն տուժի, մինչդեռ յեթե նա իր փեթակները տաք չի սարքել, չեթե ձմեռը սպասածին հակառակ խիստ ցուրտ լինի, մեղուները կարող են փչանալ: Պետք է նկատի առնել նաև, վոր ձմեռը մեղուներին ոգնության հասնել չի կարելի, յեթե անգամ նրանք կոտորվելիս լինեն, վորովհետև փեթակում վորևե աշխատանք կատարել, մանավանդ չերբ նա գտնվում է դրսում, անհնարին է:

Նորմալ ոգափոխություն սարքելու համար անհրաժեշտ է մոմաշորը կամ տախտակյա ծածկը փեթակի վրայից վերցնել և շրջանակները ծածկել մի ծակոտկեն կոտորով, իսկ վրայից դնել դարմանով բարձր: Արկանոցը պետք է բաց լինի, բայց փոքրացրած, յերբ փեթակը ամփոփում եք պատյանի մեջ, պետք է արկանոցի առաջ հատուկ անցք սարքել (կարելիոր): Յեթե արկանոցը բռնվում է սառուցով և մեղուների տեսակներով, չերբեմն պետք է մաքրել, բայց զգուշությամբ, վորպեսզի մեղուները չանհանգստանան:

Շրջանակների վրա պետք է դնել փայտյա ձողիկներ, վորպեսզի մեղուները անհրաժեշտության դեպքում շրջանակների վրայով անցուղարձ ունենան:

Վորպեսզի ձմեռվա պայծառ գրերին, մանավանդ զարնան կողմը, չերբ որբերը տաքանում են, մեղուներն արևի ճառագայթներից դեղված դուրս չթռչեն և չկոտորվեն պետք է մի տախտակով արկանոցի վրա հով անել:

Մկներեց պաշտպանելու համար պետք է կոտորի ողանցքները մետաղացանցով պատած լինեն, արկանոցը 8 միլլիմետրից ավելի բարձր չպետք է լինի:

Փեթակներին ձեռք չպետք է տալ թխկոց չանել և առհասարակ չանհանգստացնել նրանց: Կալի և յեթե մեղուները դասավորված են մեծ ճանապարհներեց հեռու և գեանի ցնցումներից (կառքերի անց ու դարձ) ազատ են:

Ե. ՄԵՂՈՒՆԵՐԻ ՉՄԵՌԵԼԸ ՆԵՐՍՈՒՄ: ԻՆՉՊԵՍ ԵՆ ՉՄԵՌՈՒՄ ՄԵՂՈՒՆԵՐԸ ՄԵՉՆՈՒՄ

Մեղնում մեղուներին լավագույն դեպքում դնում են ձմեռելու վորևե պատահական շենքում մի սենյակում, մարագում, խրճիթում և այլն. այդպիսի շենքերում ձմեռվա խիստ ցրտերին ջուրը սառչում է և մեղուները տանջվում են ցրտից, իսկ դարնան մոտերքը ողբ տաքանում է և մեղուները սկսում են նեղվել շուրջից: Բայց այդ դեռ լավ է, վորովհետև մեղուների տեղն առանձին է: Հաճախ նրանց դնում են հենց թոնրափներում, վորտեղ իրենք են ապրում, կամ մի ախպես տեղ, վորտեղով անց ու դարձ են անում (նախասենյակ, միջանցք) և վերջապես մատանում կամ նկուղում, վորտեղ մարդիկ հաճախ ներս ու դուրս են անում, այդ տեղերում քայլում են, դուրսում, ցախ ճղում, դիպչում են փեթակներին և խանգարում նրանց հանգիստը. այդտեղ (թոնրափներում) ծուխ և լինում, ցուրտ, ապա տաք, յերբեմն ողբ հագեցած և լինում գորբշիկներով և այլն. մատաններում և նկուղներում հաճախ խոնավ է լինում, ողբ ծանր և հագեցած սոխի, կաղամբի, քաղախի և այլ հոտերով: Ճիշտ է, մեղուները մի կերպ այս պայմաններում անց են կացնում ձմեռը, բայց ընտանիքների բավական զգալի

սկսո ամեն տարի հանդիմանում է, իսկ մնացածները շատ-պաշար են սպառում և շատ մեղու կորցնում: Դուրս դրվելու մասնատում մեղուները փեթակում պտտամած են, հյուսված և հիվանդ (փորլուշձ), բոլոր փեթակներում փորվ ու ձու կա, բայց ցաք ու ցրվի, խառն ի խուրը:

Նախ քան դիմելը այն հարցին թե ինչպես պեժբն սառել լավ ձմեռոցը, քվեմք այն պահանջները, փորոնց նա պետք է բավարարի.

1. Ջերմաստիճանը պետք է լինի նոստոտավոր. Ցելսիուսի: $+6^{\circ}\text{C}$ -ից մինչև $+8$ (Րեոմյուրի 5 6 $1/2$). Ջերմաստիճանի ստատանումներ չպիտի լինեն:

2. Չմեռացում ողը պետք է լինի բ ցարձակութեն մաքուր, ողափոխությունը՝ լավ:

3. Չմեռացում խոնավության հետք անգամ չպետք է լինի:

4. Մեղուները պետք է ձմեռեն բացարձակ խավարի մեջ:

5. Վոչ մի ցնցում, վոչ մի թխկոց չպետք է անհանգստացնի մեղուներին:

Գեժնափոր ձմեռոց: Այս պահանջներին բավարարել կարող է միայն ստորյերկրյա ձմեռոցը՝ հատուկ կերպով սարքած:

Ըստ Րուտի ձմեռոցի լայնությունն է 3.6 մետր, բարձրությունը՝ 2 մետր:

Գեժնափոր շինության մեջ, ամենախիստ ցլտերին անգամ մեղուների արտադրած տաքությունը միանգամայն բավական է, վոր Ջերմության աստիճանը պահանջված բարձրությունից չիջնի: Գարնան կողմը

միայն գեժնափոր շինության մեջ կարող է Ջերմության աստիճանը շատ չբարձրանալ *): Ողափոխությունը ուժեղացնելու և սահմանափակելու միջոցով և կարելի է Ջերմաստիճանը կանոնավորել:

Գեժնափորի համար պետք է ընտրել վորքան կարելի յե չոր տեղ, բայց մինչև իսկ մի այդպիսի տեղ ձարելու դեպքում էլ պետք է վորոշ միջոցներ ձեռք առնել, վոր ձմեռոցը խոնավությունից բոլորովին զերծ լինի:

Դրա համար նախ հատակը 10—12 վերջոկ խորությամբ պետք է լցնել լեռ քարերի գլխաչափ կտորներով, յերևոր խիճ վոնել և խճի վրայից սվաղ քաշել: Այս ձևով գեժնի մեջ պարունակվող խոնավությունը այլևս զծվել, վեր բարձրանալ և հասնել հատակին չի կարող: Միևնույն կերպով պետք է կտրել խոնավության ճանապարհը դեպի ձմեռոց պատերի կողմից. դրա համար նրանց լետեր նույնպիսի քարեր պետք է լրցնել: Վորպեսզի խոնավությունը պատերի միջոցով չկարողանա վերև բարձրանալ, պետք պատերը շարել լեռ քարով և վոչ տուֆով (քյալանդ) և վոչ թի կրով, այլ սովորական կավով: Այս կողմից ավելի ապահով լինելու համար պետք է պատերի հիմքը զնելուց հետո, հատակի մակերևութից քիչ ցած մի յերկու մեծ սալեր շարել և սպա պատը շարունակել այդ սալերի վրայից:

*) Ըստ Րուտի լավ սարքած գեժնափորում Ջերմաչափ, ցույց է տալիս $+7^{\circ}\text{C}$, մինչև գեժնի ստիճանում անգամ բարեխառնությունը $+27^{\circ}\text{C}$ -ի յե (ձմեռոցում մեղուներ չեղած ժամանակ):

Առաստաղի գեանի սառուցման գծից պետք է ցածրը լինի, իսկ հողի շերտը վորքան կարելի չի հաստ (ըստ Բուսի 120 սանտիմետր):

Առանձին ուշադրութիւն պետք է դարձվի ողափոխութեան խողովակները վրա. նրանցից մեկը վերջանում է հատակից մեկ կամ մեկուկէս թիզ բարձրութեան վրա, իսկ մյուսը՝ հենց առաստաղի տակ. առաջինով պաղ ողը ներհոսում է ձմեռոց, իսկ մյուսով տաք ողը արտահոսում է ձմեռոցից. խողովակները լավ է շինել փայտից. նրանց հանվածքը հափասար է աշնքան քառակուսի դյույմի, վորքան փեթակ դրվում է ձմեռոց. խողովակները պետք է ունենան փայտյա խուփեր, վորոնցով կարելի լինի նրանց փակել կամ բացել, փորքացնել կամ մեծացնել ըստ ջերմաստիճանի. խողովակները պետք է հարմարեցրած լինեն աշնպես, վոր նրանցով լույս չնկնի ձմեռոց, (յերկու կամ յերեք ծունկ կտուրի վրա *):

Յեթե գետինը քար է, կամ ջրոտ, աշնպես վոր գեանափոր ձմեռոց շինելը հնարավոր չէ, կարելի չի ձմեռոցը շինել նաև գեանի յերեսը, բայց այդ գեպքում անհրաժեշտ է հողի հաստ շերտով ծածկել աշն, աշնպես վոր հողարլուր ստացվի: Այսպիսի ձմեռոցում ամենից դժվարը դռան սարքելն է. խորհուրդ է տրվում գուռը սարքել աշնպես, վոր նա ուղիղ դուրսը չբացվի, այլ մի նեղ միջանցքի մեջ, վորը վերջավորվում է դռնով: Համենայն գեպս գուռը պետք է կրկնակի լինի:

*) խողովակների սարքելու ավելի բարդ ձևերն այստեղ բաց ենք թողնում:

Ըստ Ֆիլիպսի «ձմեռոցի ծավալը պետք է աշնպես լինի, վոր յուրաքանչյուր փեթակին զա մոտավորապես 0,4 խոր. մետր. իսկ յեթե ամեն մի փեթակին դալիս է ավելի մեծ տարածութիւն, նրանց համար դժվար է լինում պահպանել անհրաժեշտ ջերմաստիճանը»: Այս խոտքերին մեզ մնում է միայն ավելացնել, վոր այսպիսի ձմեռոցում առանձնապես կարևոր է զարնան կողմերում երափոխութիւնն ուժեղացնել, վորպեսզի մեղուները շողից չնեղվին, մինչև հնարավոր լինի նրանց դուրս գնել:

Մենք խորհուրդ կառայենք մեր մեղվապահներին վոչ մի դժվարութեան և ծախսի առաջ կանգ չառնել մեղուների համար այսպիսի ձմեռոցներ շինելու համար: Այդ կլինի մի խոշոր քայլ մեր մեղվաբուծութիւնը իր ներկա վիճակից հանելու և ոացիանալիցացիալի ճանապարհի վրա դնելու ուղղութեամբ. այդ առաջին հերթին հնարավոր պիտի լինի անել մեր պետական և կալիքալի մեղվանոցներում:

2. ՄԵՂՈՒՆԵՐԻ ԽՆԱՄՔԸ ՅԵՎ ՀՄԿՂՈՒԹՅՈՒՆԸ ՉՄԵՌՈՅՈՒՄ

Ի՞նչպես սարքել փերակներ ձմեռոցում դնելու համար. — Ինչպես արդեն ասել ենք, պետք է մոմաշորերը վերցնել և շրջանակները ծածկել ծաղոտն կտորով: Բարձր մենք անհրաժեշտ ենք համարում թողնել փեթակի վրա: Յեթե ձմեռոցը լիովին համապատասխանում է մեր առաջադրած պահանջներին, կարելի չի վոչ միջնատակներ և վոչ տաքացում չգնել, բայց յեթե վախնում եք ցրտից, անպայման պիտի գնեք: Յե-

թե փեթակում դատարկ չեչեր կան, մեղուները կդասավորվեն նրանց վրա և ձմեռը նրանց վրա չեկ կատակեն սովից, ուստի և այսպիսի հացերը պետք է ժամանակին հանված լինեն փեթակից:

Յերբ պիտի է մեղուներին դնել ձմեռոց. — Վորքան յերկար մեղուներն ոգտվեն դրսի մաքուր ուղիք և հնարավորութիւն ունենան փեթակից դուրս թռչել և մաքրելի իրենց փորում հավաքված կղկղանքներէց, այնքան լավ: Բայց յեթե մեղուների ներս գնելն ուշացնեք, կարող են հանկարծ սկսվել անձրևները և ձյունաբեր յեղանակներ: Ուստի և յերբ արդեն գիշերները ջուրը սառչում է և չեղիամ է դնում, մեղուներին պետք է ներս քաշել:

Չերմասիճան. — Մեղվապահի ամենակարևոր հոգւր պիտի լինի հեռեկ ձմեռոցի Չերմաստիճանին. նա պետք է ձմեռոցում կախված ունենա Չերմաչափ և աշխատի նորմալ Չերմաստիճան պահպանել աչնտեղ: Յեթե մեղուները տաքացված են, չպետք է անհանգրստանալ յեթե Չերմաստիճանը միքանի սր դրոյից ներքե իջնի: Չմեռոցը տաքացնելու արհեստական միջոցների չպետք է գիմնել, քանի վոր Չերմաստիճանը դրոյից ցած չէ, յեթե մինչև լակ փեթակները տաքացված չեն: Իսկ ծալբահեղ գեպքերում մեղվապահը կարող է ստիպված լինել ձմեռոցը տաքացնել, բայց չափազանց զգուշ պետք է լինի Չերմաստիճանի սուր առատնումներից. միայն կերասիակալից ոգտվելը կարող է նպատակահարմար լինել:

Յերբ դարձնել մտանում է, յեղանակը տաքանում է, իսկ մեղուներին դուրս գնելու հնարավորութիւն չկա, ձմեռոցում մեղուները կարող են խիստ

տառապել շոգից (չեթե ձմեռոցը գետնափոր չէ): Այդ դեպքում ամեն հնարավոր միջոցներով պետք է ուժեղացնել ուղափոխութիւնը, գիշերները դռները բացել և աչն: Միևնուչն ժամանակ պետք է փեթակներէրարկանոցները լաչն բացել և ցերեկները պահպանել ձմեռոցում բացարձակ մթութիւնը:

Ուժեղ ընտանիքներէ արկանոցն ավելի չէ լաչն, թույլերինը՝ նեղ: Յեթե հնարավոր լինել, շատ լավ կլինել հատակը բոլորովին հեռացնել: Սակաչն այդ բոլորը պետք է անել աչնպես, վոր մկները չմտնեն:

Յերբ մեղուները ցրտից կամ շոգից չեն նեղվում, ընկղմվում են լիակատար հանգստի մեջ, և նստում փեթակում աչնքան հանդարտ, վոր ձմեռոց մտնելիս պետք է ուշադրութեամբ ականջ դնես, վորպեսզի հազիվ լսես նրանց խուլ և մեղմ բվկոցը. իսկ չեթե նրանք շոգում են, կամ մըսում, ուժգին կերպով աղմկում են:

Չմեռվա ընթացքում առանց անհրաժեշտութեան չպետք է մտնել ձմեռոց. մտնելիս պետք է աղմուկ և թխկոց չանել: Յեթե մեղվանոցը լավ է հարմարեցրած, բավական է ձմեռվա ընթացքում ընդամենը միքանի անգամ ներս մտնել ստուգելու մեղուների դրութիւնը՝ թե ինչպես պետք է դասավորել փեթակները ձմեռոցում, աչք արդեն բավական պաղղ է մը ցուցմունքներից:

Չմեռոցում մեղուներին կերակրելը. — Աշունքվանից մեղվապահը պետք է մեղուներին ապահովի լսւվորակ պաշարի անհրաժեշտ քանակով, վորը ըստ իր դասավորութեան ևս պետք է համապատասխանի մեղուների պահանջին: Սակաչն կարող են լինել հատ ու կենա ընտանիքներ, վորսնց մեղվապահը աշունը ձեռք

հասցնել չի կարողացել: Մտուգելու համար, մեղուն սոված է թե վոչ, պետք է բանալ փեթակը և վերևից նայել շրջանակները արանքը: Յեթե մեզվի կծիկը շրջանակները խորքում հանգիստ նստած է, կնշանակի նա սոված չէ. իսկ յեթե կծիկը բարձրացել է վերև և հասել է շրջանակները վերի ձողերին, ուրեմն պաշարը սպառված է և նրանց անհրաժեշտ է կերակրել:

Պետք է սակայն նկատի առնել, վոր ուժեղ ընտանիքները միևնույն պայմաններում այնպես սեղմ կծիկ չեն կապում և խորը չեն իջնում, ինչպես թուլերը. այստեղ իհարկե նշանակութուն ունի նույնպես շրջանակի բարձրությունը: Կավաղուչն կերը այս դեպքում կերակրաշողախն է, վոր պետք է պատրաստել այս կերպ: Տաքացնել ծոր մեղրը կրակի վրա, լցնել նրա մեջ մանր աղացած և թանդիֆով անցկացրած մաքուր շաքարի փոշի և հունցել, հետզհետե շաքարափոշի ավելացնելով, մինչև շողախն այնքան կպնդանա, վոր այլևս փոշի չի վերցնի. տափակացնել, փաթաթել թանդիֆի մեջ և դնել շրջանակների վրա մոտ 2 ֆընտանոց կտորով:

Իրա փոխարեն կարելի չէ դնել նաև շաքարի կտրճներ, մի փոքր խոնավացրած, վոչ մի կարեք չկա հետագայում այս շաքարը թրջելու:

Բուրբոլին թուլլատրիլի չէ ձմեռոցում մեղուններին շաքարաջուր տալ կամ շրջանակները բաժանել և արանքներով կնքած շրջանակներ դնել:

Մեղուներին դուրս դնելու չպետք է շտապել, յեթև նրանք իրենց ձմեռոցում լավ են զգում. բայց չեթե նրանք ձմեռոցում նեղվում են, պետք է դուրս դնել,

հենց վոր ձյունը հալվի. և յեղանակը փոքր լի շտե նպաստավոր կլինի:

Ընթանիքների բուլացումը դուրս դնելուց հետո սովորական չերուլթ է մեղունում. նրա պատճառների մասին մենք արդեն խոսել ենք. վորքան մեծ է այդ թուլացումը, այնքան մեղուն վատ է ձմեռել. այդ չերուլթը պետք է մեղվապահին չափանիշ ծառայի ձմեռելու հաջողութան մասին դատելու համար: Ե. Ֆիլիպսը գտնում է, վոր աշնանը ձմեռվա համապատասխան խնամատարութան միջոցով կարելի չէ այս չերուլթը վերացնել. համենայն դեպս ամեն մի մեղվապահ պետք է ամեն կերպ ձգտի նվազեցնել այդ թուլացումը և վորքան ավելի այդ նրան հաջողվում է, այնքան նա ավելի մոտ է մեղունների աշնան և ձմեռվա խնամքի բուն նպատակին:

Վերջացնում ենք մեր աշխատութունը նույն Ֆիլիպսի խոսքերով:

«Մեղվապահը պետք է հավատացած լինի, վոր վորքան նա լավ է տաքացնում իր մեղուններին, դրբսում են ձմեռում նրանք թե ներսում, այդ միևնույն է, այնքան ավելի լավ կվարձատրեն նրան մեղունները մեղրով հետևյալ տարում: Յերբեք չի կարելի ձմեռալին կորուստները համարել անխուսափելի. և այն մեղվապահները, վորոնք այդ կորուստների վրա նայում են վորպես անհրաժեշտութուն, լուրջ կերպով սխալվում են: Չի կարող մեղվաբուծութան զարգացումը տեղի ունենալ իր ամբողջութամբ, քանի վոր չեն նվազեցված մեղունների ձմեռվա կորուստները»:

Ց Ա Ն Կ

Ա. Հանգստի կացութիւն	3
Բ. Զանազան հանդամանքների ազդեցու- թյունը հանգստի կացութեան վրա	8
Գ. Մեղուների ձմեռելու շերիւ յեղանակ	32
Դ. Մեղուների ձմեռելը դրսում	36
Ե. Մեղուների ձմեռելը ներսում	39
Զ. Մեղուների խնամքը և հսկողութիւնը ձմեռացում	43



23.138

ԳԻՆԸ 8 ԿՈՊ. (1½ մամուլ)

6 20. —



ВОСТОК/ВЕРЕН
Дзидеги Нав
СССР

Х. ТЕР-АВАКЯН

Осенний и зимний уход за пчелами

Госиздат ССР Армении
Эривань—1930